Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 08

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ նիստի

ք. Երևան 15 հոկտեմբեր 2021թ.

Ղեկավարվելով ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 8-ի N 22-Լ որոշմամբ և հիմք ընդունելով Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետը, կայացել է՝ Կառավարման խորհրդի արտահերթ նիստ:

Համաձայն Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի N 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետի՝ Կառավարման խորհրդի նիստերն իրավազոր են, եթե այդ նիստերին մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ից ավելին:

Մասնակցում են՝

Ռոմանոս Պետրոսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Վաչե Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Արթուր Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Անի Իսպիրյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Սուրեն Գրիգորյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Գևորգ Բալումյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու
Մարատ Գրիգորյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան
Բացակայում են՝	
Պերճ Խաչատրյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Կառավարման խորհրդի անդամ Պերճ Խաչատրյանը տեղեկացրել է, որ 2021 թվականի հոկտեմբերի 15-ից 25-ը լինելու է գործուղման մեջ և բացակայելու է Հայաստանի

Հանրապետությունից, սակայն օրակարգի հարցերի վերաբերյալ ներկայացրել է գրավոր դիտարկումներ, որոնք կցվում են արձանագրությանը:

Կառավարման խորհրդի անդամ Արման Պողոսյանը տեղեկացրել է, որ ս.թ. հոկտեմբերի 13-15-ը լինելու է արձակուրդում, ուստի խորհրդի նիստին մասնակցել չի կարողանա:

ՕՐԱԿԱՐԳ

1. «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2021 թվականի գնումների պլանում փոփոխություններ կատարելուն համաձայնություն տալու վերաբերյալ:

(Զեկուցող՝ ԲԸՏՄղեկավար Հ. Մարտիրոսյան)

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուն հավանություն տալու վերաբերյալ:

(Զեկուցող՝ ԲԸՏՄղեկավար Հ. Մարտիրոսյան)

3. Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում Ասատուր Վարդանյանի թեկնածությանը հավանություն տալու վերաբերյալ:

(Զեկուցող՝ Շրջակա միջավայրի նախարար (ԲԸՏՄ կառավարման խորհրդի նախագահ) Ռ. Պետրոսյան)

Կառավարման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

Օրակարգի 1-ին հարցը՝ Կառավարման խորհրդի նախագահի առաջարկությամբ և խորհրդի որոշմամբ հանել և օրակարգի 3-րդ հարցը քննարկել 1-ին հարցի փոխարեն, իսկ 1-ին հարցի վերաբերյալ հրավիրել արտահերթ նիստ՝ հեռավար քվեարկությամբ:

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում Ասատուր Վարդանյանի թեկնածությանը:

Կողմ 6, Դեմ 1

2. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուն:

Կողմ 7

Կառավարման խորհրդի դիտարկումները.

Կառավարման խորհրդի օրակարգի քննարկման ժամանակ Գևորգ Բալումյանը բարձրացրեց հարց օրակարգի 1-ին հարցի նյութերի տրամադրման վերաբերյալ, նշելով, որ այն տրամադրվել է Կառավարման խորհրդի նիստից 1 օր առաջ, սակայն, համաձայն 2019 թվականի օգոստոսի 8-ի թիվ 1000-Ն որոշմամբ այն պետք է տրամադրվեր առնվազն 2 օր առաջ, և խնդրեց Կառավարման խորհրդի նիստի քարտուղարին և խորհրդի անդամներին պարզաբանել կատարվածի իրավաչափությունը:

Կառավարման խորհրդի նիստի քարտուղարը դիտարկեց, որ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, ինչի մասին հեռախոսազանգի միջոցով տեղեկացվել են խորհրդի բոլոր անդամները, ինչպես նաև Կառավարման խորհուրդը իրավասու է քվեարկել նիստի օրակարգի վերաբերյալ և այդ հարցի մասով ընդունել որոշում:

Գևորգ Բալումյանի բարձրացրած հարցի վերաբերյալ Կառավարման խորհրդի անդամ Սուրեն Գրիգորյանը հայտնեց հետևյալ դիտարկումը. Ձեր կողմից բարձրացված հարցը ժամկետների խախտման վերաբերյալ ավելի շատ կազմակերպչական վրիպակ է և, եթե խորհրդի բոլոր անդամները հասցրել են ծանոթանալ հարցի նյութերին, ապա կարող ենք քվեարկել և այն իրավաչափ կլինի:

Արթուր Ասոյանը կիսեց Գևորգ Բալումյանի մտահոգությունը՝ նշելով, որ համաձայն Կառավարման խորհրդի կողմից հաստատված աշխատակարգի՝ արտահերթ նիստ հրավիրելիս օրակարգը և օրակարգում ընդգրկված հարցերի նյութերն առնվազն 3 աշխատանքային օր առաջ պետք է տրամադրվեին Խորհրդի անդամներին, և հորդորեց Կառավարման խորհրդի նիստի քարտուղարին առավել ուշադիր լինել, և բացառել նման վրիպումները: Ասոյանը առաջարկեց օրակարգի առաջին հարցը քվեարկել հեռավար ընթացակարգով՝ հնարավորություն տալով խորհրդի անդամներին ծանոթանալ հարցի բովանդակությանը:

Ելնելով վերոգրյալից Կառավարման խորհորդը որոշեց օրակարգից հանել 1-ին հարցը, իսկ Խորհրդի Նախագահ Ռոմանոս Պետրոսյանը որոշեց 1-ին հարցի վերաբերյալ հրավիրել արտահերթ նիստ հեռավար քվեարկությամբ, ինչպես նաև 1-ին հարցի փոխարեն քվեարկության դնել 3-րդ հարցը:

Կառավարման խորհրդի նախագահի կողմից Կառավարման խորհրդի անդամներին ներկայացվեց ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածու Ասատուր Վարդանյանին՝ նշելով, որ թեկնածուն զբաղեցրել է ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետի պաշտոնը, նա տիրապետում է ոլորտի առանցքային խնդիրներին և իրեն վերապահված լիազորությունները կատարել է պատշաճ, ինչը նաև հավաստեց Կառավարման խորհրդի անդամ Վաչե Տերտերյանը:

Կառավարման խորհրդի անդամ Մարատ Գրիգորյանը հայտնեց, որ ծանոթանալով թեկնածուի ինքնակենսագրությանը և անցած ճանապարհին կարող ենք հաստատել, որ թեկնածուն կարող է աշխատել Տեսչական մարմնի տեղակալի պաշտոնում և լուծել իր առջև դրված խնդիրները:

Կառավարման խորհրդի անդամ Գևորգ Բալումյանի կողմից հարց ուղղվեց թեկնածուին՝ Ստուգումների ծրագիրը կազմելիս ռիսկերի գնահատման վերաբերյալ, թեկնածուն հայտնեց իր տեսակետը, այն է՝ Տեսչական մարմնին վերապահված ոլորտում Ռիսկերի գնահատումն իրականացվում է հաշվի առնելով Տնտեսվարողի գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի, մարդու առողջության, կենդանական և բուսական աշխարհի վրա, ինչպես նաև հաստատված մեթոդաբանության հիման վրա պետք է տարանջատել տնտեսվարողների բարձր, միջին և ցածր ռիսկայնության դասակարգումը, ինչը հնարավոր կլինի կիրառել Տեսչական մարմնի անկախության երաշխավորության առկայության դեպքում:

Գևորգ Բալումյանը հայտնեց, որ կցանկանար Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում տեսնել ոլորտի մասնագետ, ոչ թե իրավաբան:

Կառավարման խորհրդի անդամ Արթուր Ասոյանը Գևորգ Բալումյանի դիտարկման վերաբերյալ հայտնեց, որ Տեսչական մարմնի ոլորտները բազմազան են, իսկ Տեսչական մարմնի տեղակալի հաստիքները երեքն են, ինչի արդյունքում հնարավոր չի տեղակալների հաստիքներում բոլոր ոլորտների համար ունենալ նեղ մասնագետներ, շատ ավելի կարևոր է, որ տեղակալը տիրապետի ընդհանուր ոլորտին, ունենա լավ կառավարչական հմտություններ, որ կարողանա համակարգի իրեն վերապահված ոլորտը՝ աշխատելով ոլորտային վարչությունների հետ: Ասոյանը ևս հարցեր ուղղեց թեկնածուին, որոնք վերաբերվում էին ստուգումների ընթացակարգերին, հնարավոր շահերի բախումը բացառելու սկզբունքներին և ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգին: Թեկնածուի կողմից հարցերի տրվեցին սպառիչ պատասխաններ:

2-րդ հարցի քննարկման ժամանակ Տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանը ներկայացրեց տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելու վերաբերյալ հետևալ հիմնավորումը.

Տեսչական մարմինը վերահսկողության ոլորտներում իր նպատակներն ու խնդիրներն ապահովելու ընթացքում պարզել է, որ առկա են խնդիրներ՝ կապված աշխատանքների կատարման օպերատիվության, որակի ապահովման, թափանցիկության, արժանահավատության և հաշվետվողականության հետ, իսկ դրանց նվազեցման համար անհրաժեշտ է առավելագույնս պարզեցման, հստակեցման և հասանելիության սկզբունքով

ներդնել էլեկտրոնային վերահսկողության համակարգ՝ համապատասխան էլեկտրոնային ծրագրի և սարքավորումների ապահովմամբ:

Վեր հանված խնդիրների իրականացման նպատակով երկարաժամկետ համագործակցության արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) Հայաստանյան մասնաճյուղի և Կովկասյան բնության հիմնադրամի (CNF) հետ, ինչի շրջանակներում Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը կարող է ստանալ ֆինանսական, տեխնիկական և խորհրդատվական աջակցություն, ինչպես նաև Հայաստանի տարածքների լուսանկարահանման նպատակով անօդաչու սարքեր:

Տեսչական մարմինն այս պահի դրությամբ աշխատանքների կազմակերպման համար չունի SS ոլորտի համապատասխան մասնագետ և տվյալ խնդիրներն առաջացել են հաստիքի բացակայության արդյունքում, ինչի հիման վրա առաջարկում եմ հաստիքացուցակում ավելացնել մեկ՝ «Խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող»-ի և «Տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման մասնագետ»-ի հաստիք՝ կրճատելով «Տնտեսվարի»-ի և «Առաքիչ»(թափուր)-ի հաստիքները:

Քվեարկությամբ որոշումներն ընդունվել են ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)_____Ռ.Պետրոսյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետ (խորհրդի քարտուղար) _____Հ. Բարսեղյան